Ստորեւ ներկայացուող էջերը թիւրիմացաբար դուրս են մնացել Գէորգ Տէր-Վարդանեանի «Յուցակ Յարութիւն Քիւրտեան հաւաքածոյի հայերէն ժապաւինաձեւ ձեռագիր հմայիլների» հրապարակումից (տե՛ս «Էջմիածին» 2013, Գ., էջ 62-98): Սա պէտք է համարել հրապարակման շարունակութիւնը:

*13.*Աղօթք գլխացաւի եւ աչից ցաւի - *Գայր գետն Յորդանան եւ բերէր ծառ մի գեղեցիկ եւ պատուական...*

14. Աղօթք չար նազարի եւ չար լեզուի, զոր Տէր Աստուած պահեսցէ ամէն - *Հրանիւթ, Հրափակէլ, Հրատն, Համատուն, Համակէգ, որ էք սպասաւորք Աստուծոյ...*

15. Աղօթք վասն ճանապարհորդաց - *Կենդանուէլ, Կենդանամակէլ, որ էք սպասաւորք Աստուծոյ...*

15. Աղօթք չար նազարի եւ նազարի եւ չար լեզուի - *Տէր Աստուած մարդասէր, մարդասիրի Հօր որդի, դու պահապան եւ օգնական...*

17. [Բարեխօսութիւն սրբոց թագաւորաց] - *Այլ եւ բարեխօսութեամբ սուրբ թագաւորացն Եզեկիայ, Սեդեկիայ...*

18. [Աղօթք Աբրահամու նահապետի] - *Եւ էառ Աբրահամ զորդին իւր զԻսահակ եւ տարաւ ի զենլիս իւր... [Հմմտ. Ծն. ԻԲ. 3 եւ հետեւ.]:*

Ծնթ. Սկիզբը գպագրուած է յաջորդ բնագրի հետ՝ փողերի շեղանկիւն հատումներով, որոնց միջեւ կան նոյնպէս շեղանկիւն զարդաշրջանակներ (ներկուած՝ դեղինով), իսկ սրանց մէջ՝ փոքրիկ հաւասարաթեւ ոճաւոր խաչեր: Բնագրի աւարտը գպուած է կրկին յաջորդ բնագրի վերջին զուգահեռ՝ երկսիւն, սա որպէս առաջին, միւսը՝ որպէս երկրորդ սիւն:

19. [Աղօթք զաւրաւոր եւ անուանի Սրբոց Նշանացն] - *Բարեխօսութեամբ աստուածային սուրբ նշանացն Քրիստոսի Աստուծոյ մերոյ...*

20. Աղօթք սրբոյն Գրիգորի Նարեկացոյն է ասացեալ՝ ի դէմս Որդւոյն Աստուծոյ - *Որդի Աստուծոյ կենդանւոյ...*

21. Աղօթք Նորին է ասացեալ - *Ընկալ քաղցրութեամբ, Տէր Աստուած հզօր, զդառնացողիս զհառաչանս...*

22. Աղօթք սրբոյն Գէորգայ զօրավարին - *Բարեխօսութեամբ սրբոյն Գէորգայ զօրավարին եւ Անդրէի զինաւորին...*

23. Աղօթք սրբոյն Սարգսի զօրավարին - *Երջանիկ զօրականդ սուրբդ Սարգիս...*

Ծնթ. Անկանոն չափածոյ է, 5 տուն, ամէն քառատողից յետոյ, որպէս 5րդ տող՝ «Քաջ սպառազէն սուրբդ Սարգիս»):

24. Սրբոյ Աւետարան ըստ Մատթէոսի. Տէրն մեր Յիսուս Քրիստոս - *Եւ եկեալ անտի Յիսուս՝ գնաց ի կողմանս Տիւրոսի եւ Սիդոնի... [ԺԵ .22-28]:*

25. Սրբոյ Աւետարանս ըստ Մարկոսի. Տէրն մեր Յիսուս Քրիստոս - *Եւ նոյնժամայն ճեպեաց զաշակերտսն մտանել ի նաւ... [Զ. 45-51]:*

26. Սրբոյ Աւետարանս ըստ Ղուկասու. Տէրն մեր Յիսուս Քրիստոս - *Եւ էջ ի Կապառնայում, ի քաղաքն Գալիլեացւոց... [Դ. 31-37]:*

27. Սրբոյ Աւետարանս ըստ Յովհաննու Տէրն մեր Յիսուս Քրիստոս - *Եւ եկն դարձեալ ի Կանայ Գալիլեացւոց, ուր արար զջուրն ի գինի... [Դ. 46-54]:*

28. Աղօթք կապանաց դիւաց - *Սողոմոն իմաստուն ետես զիշխանն դիւաց...*

29. Աղօթք վասն զաւակծնութեան - *Նայեա՛յ յաղաչանս ծառայիս քո...*

30. Աղօթք թպղայի եւ ալի - *Սուրբն Սիովն, սուրբն Սիսի եւ սուրբն Սիսիանէ...*

31. Աղօթք վասն վաճառի եւ ամենայն բանի - *Յայնժամ բացան երկինք, եւ ելին հրեշտակք...*

32. Աստուած վայելումն տացէ / Այս Հէմայիլս որ գրված է... (չափածոյ, 9 տող):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

Վերջում. Տպեցաւ Հէմայիլս ի թուին հայոց ՌՃՀԳ. (1724) Հոկտեմբերի Ե.:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԵՏԱԳԱՅԻ

ԺԸ. դ. - Անունք ստացող Գասպարի եւ երբեմն իր որդի Յարութիւնի՝ բնագրերի եւ նկարների մակագրութիւնների մէջ եւ վերջում:

Ի. դ., Բ. երեսին փակցուած կարկատան թղթի վրայ, մանուշակագոյն թանաքով. «Ապրիլ / Կարապետ *աղա* / Մանուկ *աղա* / *եանի գալֆա* / *վանկել* / *յոհ էֆէնտի* / Դաւիթեան / *մախսուտ* / *Արթին պէկն»:*

Նոյնպիսի կարկատան թղթերի վրայ կան զանազան հաշիւներ:

ՀՄԱՅԻԼՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՂԻՒՍԱԿ

Հմր	Ժամնկ	Վայր	Գրիչ	Ստացող	Նիւթ	Մեծութիւն	Գիր
1	1631	-	-	Տէր Աւետիս	թղթ	442x12,9	բլրգր
2	1663	-	-	Խաչատուր (1669 թ.)	թղթ	503,5x7,5	նտրգր
3	1667	[Կ. Պոլի՞ս]	Գաբրիէլ ծաղկարար	Կարապետ	մգղթ	643,5x7,5	բլրգր
4	1681	Բաղէշ	Վարդան քհյ	Հոիփսիմէ, Դանիէլ	թղթ	213,5x7,8	նտրգր
5	1717	Պրուսա	Նիկողայոս երէց	Գրիգոր	թղթ	403x7,2	նտրգր
6	1730	-	Տէր Անդրէաս	-	թղթ	132x5,9	նտրգր
7	1733	Սուրբ Գէորգի թաղ	-	Մարիամ, Աբրահամ	թղթ	364x5,1	նտրգր
8	1744	-	Ստեփան երէց	Թաթոս եւ իր որդի Սիմաոն	թղթ	319x9,8	նտրգր
9	1773ցառջ	-	-	Վարդան, որդի Մակարի	թղթ	583x10,2	նտրգր
10	1772	-	տիրացու Օհան	-	թղթ	49x6	շղգր
11	ԺԶ. դար	-	-	Մելիտոն	մգղթ	315,5x8	բլրգր
12	1687	-	Վարդան քհյ Բալուեցի	Հէրապետ եւ Կօզալ	թղթ	490x8	բլրգր

13	ԺԷ. դ.	~	[Վարդան քհյ Բալու-ւեցի]	Հրեղէն, խօջա Արապշահ	թղթ	171x7,8	բլրգը
14	ԺԸ. դ.	~	~	Յովսէփ, Անթառամ	թղթ	234,5x9,2	նտրգը
15	ԺԸ. դ.	~	~	~	թղթ	334x8,4	նտրգը
16	1721	~	~	Կարապետ	թղթ	923x7,3	նտրգը
17	ԺԷ. դ.	~	~	Ալեքսան	թղթ	251,6x6	նտրգը
18	ԺԸ. դ.	~	~	հաճի Սարգիս	թղթ	261,8x7,2 32,7x21,5	նտրգը
19	ԺԸ. դ.	~	~	Հայրապետ	թղթ	183x7,5	նտրգը
20	ԺԸ. դ.	~	~	~		66,5x5,7	նտրգը
21	1724	[Կ. Պոլիս]		Գասպար, Յարու-թիւն	թղթ	629x9,9	տպա-գիր

ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ

(նկարների անունները եւ հմայիլների կարգային համարները)

Աբրահամի զոհաբերութիւնը ~ 2, 5, 15, 21

Աստուած եւ ԺԲ. առաքեալք ~ 9

Աստուածածին (ամբողջ հասակով, երկնագոյն հէնքի վրայ, ծիրանի զգեստով եւ կապոյտ թիկնոցով) ~ 3

Աստուածածին մանուկ Յիսուսը գրկին ~ 2, 9, 12, 15, 16, 21

Բախտացոյց. անկիւններում աւետարանիչները, ձեռքներին գիրք, իրենց խորհրդանիշներով ~ 18

Գառն Աստուծոյ որ բառնայ զմեղս աշխարհի ~ 21

Գէորգ զօրավար, սպիտակ ձիով, խոցում է վիշապին, վերը՝ ամպ, նրանից ցած՝ հրեշտակ ~ 2, 15

Գէորգ զօրավար, ձիաւոր, նիզակ ի ձեռին ~ 21

Գէորգ զօրավար, սպիտակ ձիով, վիշապն ընդոտնեալ ~ 5

Գրիգոր Լուսաւորիչ ~ 2, 15, 21

Գրիգոր Նարեկացի ~ 1, 5, 12, 16, 18, 21

Դատաստա՛ն. դատաւո՛ր եւ նրա դիմաց կանգնած երեք մարդ ~ 9

Դատաստան՝ դատաւոր եւ դատուող ~ 9

Դիմանկարք՝ վեց հատ բոլորակների մէջ, Նարեկացու «Որդի աստուծոյ կենդանոյ» աղօթքի զարդերի միջեւ ~ 3

Երկոտասան առաքեալք ~ 21

Թագաւոր երկնաւոր ~ 15

Խաչ (կարմիր գծանկար, հանգուցագիծ) ~ 18

Խաչ. ձուաձեւ կանաչ հէնքի վրայ, կարմրով, հէնքի եզրերին ոճ-զարդեր - 4
Խաչելութիւն - 2, 3, 9, 12, 21 (երկիցս)
Ծաղիկ (ծաղկամանով) եւ պտուղներ (նոնե՞ր) - 2
Կապումն թպղայի եւ ալքի - 19
Կիպրիանոս Հայրապետ - 1, 16
Հաղորդութիւն - 3
Հայր Աստուած - 21
Հայր Աստուած, ԺԲ. առաքեալք - 5
Հրեշտակ (սեւով անարուեստ գծանկար) - 8
Հրեշտակ - 2, 5, 12, 13, 21
Հրեշտակ վեցթեւեան (սերովբէ) - 21
Հրեշտակապետ - 3
Հրեշտակք երկու՝ սրազէն - 16
Ղուկաս աւետարանիչ - 21
Մատթէոս աւետարանիչ - 21
Մարկոս աւետարանիչ - 21
Յիսուս Քրիստոս - 2, 12
Յիսուս Քրիստոս եւ ԺԲ. առաքեալք - 15
Յովհաննէս աւետարանիչ - 21
Յովհաննէս Կարապետ - 2, 21
Նահապետք (ծննդաբանութիւն Քրիստոսի). 42 պատկեր, վերջինը՝ Քրիստոս - 3
Ներսէս Շնորհալի - 2, 3, 9,16, 18
Պօղոս առաքեալ կապէ զսատանայ (զալքն) - 15
Պօղոս եւ Պետրոս առաքեալք, խաչափայտ - 11
Սարգիս զօրավար (գուրզ ի ձեռին) եւ իր որդի Մարտիրոս, սպիտակ ձիով - 3, 5, 9, 13, 21
Սարգիս զօրավար ՝ գուրզ ի ձեռին, ձիաւոր - 12, 15
Սողոմոն իմաստուն կապէ զդեւն - 21
Սուրբ, որ կապում է սատանային (ալ) - 5
Սուրբք, մարգարէք, հայրապետք, թագաւորք, առաքեալք՝ բոլորակների մէջ 10 դիմանկար - 3
Ստեփաննոս Նախավկայ - 2, 15, 21
Փառաբանութիւն խաչի - 9
Քառասնօրեայ գալուստն ի տաճար - 9
Քրիստո՞ս (ջնջած՝ եղծած) - 11
Քրիստոս՝ Դատաւոր արդար, թագով, բազմած գահաւորակի վրայ - 16
Քրիստոսի գերեզմանն է - 21:

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ